

**«ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»**

**TEMPUS “ARMENQA” ՆԱԽԱԳԾԻ  
ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ**

*Երևանի պետական համալսարան, 24-25 հունիսի, 2014թ.*

**Աշխատաժողով-2. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների  
ազգային շրջանակի 8-րդ և 9-րդ մակարդակների  
քննարկում**

*Ա. Բուդաղյան  
Ս. Կարաբեկյան*

## ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծանոթացում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) հետ
- ՈԱՇ-ի բնութագրիչների բարելավման և լրամշակման համար առաջարկությունների ստացում

# ԲԿ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- ❑ Ազգային մակարդակում **որակավորումների միասնական նկարագրություն**, որը միջազգայնորեն հասկանալի է և որի միջոցով կարելի է **նկարագրել ԲԿ բոլոր որակավորումներն ու կրթական ձեռքբերումները**, դրանք միմյանց հետ կապել ներդաշնակ ձևով և սահմանել դրանց միջև փոխհարաբերությունները
- ❑ Ուսումնառության յուրաքանչյուր մակարդակի (աստիճանի) համար սահմանված **չափանիշների լրակազմին համապատասխան որակավորումների դասակարգման գործիք**, որի նպատակն է **ինտեգրել և համակարգել ազգային որակավորումների ենթահամակարգերը և աշխատաշուկայի ու հասարակության հետ փոխկապակցված բարելավել որակավորումների թափանցիկությունը**, հասանելիությունը


## ՈԱՇ-Ի ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- հստակեցնել որակավորումների նպատակներն ու նշանառությունը՝ տալով դրանց նկարագրությունը՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա
- պարզաբանել որակավորումների առնչությունը մասնագիտական գործունեության և դրանց ճանաչման հետ
- պարզաբանել տարբեր որակավորումների միջև փոխշփման և մասնակի համապատասխանելիության կետերը՝ ցույց տալով որակավորումների փոխհարաբերությունը և առաջխաղացման ուղիները
- տրամադրել ուղենիշներ՝ կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման համար



# ԲԿ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

## ՀՀ բարձրագույն կրթության որակավորումներ



# ՀՀ Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 8-րդ և 9-րդ մակարդակների նկարագրիչները

Որակավորման նկարագրիչները		ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱՄՈՒ	
		ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱՄՈՒ	
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<b>5. Ինքնավարություն և պատասխանատվություն</b> (ներառյալ սովորելու կարողությունները)	<ul style="list-style-type: none"> <li>Ունակ է խթանելու հասարակության գիտական/տեխնոլոգիական, սոցիալական կամ մշակութային առաջընթացը գիտական և մասնագիտական ոլորտներում:</li> <li>Ունակ է աշխատանքի կամ հետազոտությունների առաջատար ոլորտներում առաջադրելու նոր գաղափարներ կամ համալիր նորարարական գործընթացներ և լուծելու հիմնախնդիրներ՝ դրսևորելով գիտական և մասնագիտական բարելավություն և ինքնավարություն:</li> <li>Ունակ է հմտորեն ղեկավարելու հետազոտական կամ մասնագիտական թիմ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ունակ է ստանձնելու բարդ սոցիալական, արտադրական և գիտական գործընթացների կառավարումը և սահմանելու դրանց զարգացման ռազմավարությունները և պատասխանատվություն կրելու դրանց արդյունքների համար՝ ազգային և միջազգային մակարդակներում:</li> </ul>
ԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<b>4. Ընդհանրական իմացական կարողություններ</b> (ներառյալ դատողություններ անելը)	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է մտահղել և առաջադրել նոր, բարդ և վերացական գաղափարների, տեղեկատվության ու հիմնախնդիրների ստեղծարար և ինքնատիպ պարզաբանումներ՝ հիմնվելով հետազոտության արդյունքների գնահատման վրա:</li> <li>Կարող է պլանավորել, իրականացնել և տեսության վերածել ինքնատիպ հետազոտություն, որի արդյունքների մի մասը արժանի է տպագրվելու ազգային և միջազգային գրախոսվող հրատարակություններում, ինչը նաև նշանակալի ներդրում է գիտության և/կամ մասնագիտական գործունեության ոլորտում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է ստեղծել/սինթեզել միջոցի սցիպլինար և/կամ միջօլորտային բնույթի նոր ու հիմնարար գիտելիք:</li> </ul>
	<b>3. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է օգտագործել առաջավոր մոտեցումները և մեթոդները լայն գիտական հանրությանը տեսական ու գործնական նոր և համալիր խնդիրները և հետազոտության արդյունքները տարբեր դիտանկյուններից մեկնաբանելու և ներկայացնելու համար:</li> <li>Կարող է կիրառել ՏՀՏ-ները՝ գիտական հետազոտություն կատարելու և նոր գիտելիք ստեղծելու համար:</li> <li>Կարող է տարբեր փոխհատվող ոլորտներից քննադատորեն գնահատել և փոխարկել լայն տիրույթի քանակական և որակական տվյալներ՝ համալիր գաղափարներ մտահղելու և նոր գիտելիք ստեղծելու համար:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է պլանավորել և իրականացնել գիտության տվյալ բնագավառում նորարարական հիմնարար հետազոտություն և տեսության վերածել վերջինիս արդյունքները:</li> </ul>
	<b>2. Գիտելիքի և իմացության կիրառումը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է կիրառել առաջավոր մոտեցումները, տեսությունները և մեթոդները, տեղափոխել դրանք բնագավառից բնագավառ և դրսևորել միջօլորտային կարողություններ՝ նոր և բարդ տեսական, գործնական և գիտական խնդիրների լուծման, ինչպես նաև հետազոտական աշխատանքների պլանավորման ու իրականացման համար:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կարող է ծավալել գործունեություն, որը ենթադրում է մեթոդաբանական, հետազոտական և նախագծային բնույթի հիմնախնդիրների լուծում՝ կապված բարդ սոցիալական, արտադրական և գիտական գործընթացների զարգացման և արդյունավետության բարձրացման հետ:</li> </ul>
ԳԻՏԵԼԻՔ	<b>1. Գիտելիք և իմացություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>Դրսևորում է մասնագիտական բնագավառին և փոխհատվող ոլորտներին յուրահատուկ արդիական մոտեցումների, տեսությունների, նոր հիպոթեզների և հետազոտական մեթոդների առաջավոր գիտելիք և իմացություն:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դրսևորում է մասնագիտական բնագավառի և փոխհատվող ոլորտների սկզբունքների, տեսությունների և նոր վարկածների համակարգված առաջավոր գիտելիք և իմացություն, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնելու, վերագնահատելու և նորովի ձևակերպելու դրանք:</li> </ul>
<b>Որակավորման բնորոշումը</b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Գիտությունների թեկնածուի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն խորը և համակարգված իմացություն և հատուկ հետազոտական կարողություններ՝ գիտության, հետազոտության կամ մասնագիտական գործունեության մեկ կամ մի քանի համալիր ոլորտներում գիտելիքը ընդլայնելու և/կամ նորը ստեղծելու համար</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Գիտությունների դոկտորի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն ....</li> </ul>	
<b>Ուսումնառության ծավալը</b> ECTS կրեդիտներով 24/06/2014	180	-	6



## ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ (8-րդ մակ.)

1. Ուսումնառության ոլորտի համակարգված իմացություն
2. Վարժ տիրապետում են ոլորտի հետազոտական մեթոդներին
3. Ծավալուն հետազոտական գործընթաց նախաձեռնելու, մշակելու, իրականացնելու և ամփոփելու ունակություն՝ ցուցաբերելով գիտական բարեխղճություն
4. Ինքնատիպ հետազոտության միջոցով նշանակալի ներդրում ունենալ գիտելիքի սահմաններն ընդլայնելու մեջ՝ հրապարակելով աշխատանքներ ազգային կամ միջազգային գրախոսվող հրատարակություններում
5. Նոր և համալիր գաղափարները քննադատական վերլուծության ենթարկելու, գնահատելու և ձևակերպելու ունակություն
6. Փորձառության բնագավառի շուրջ կարող են հաղորդակցվել գործընկերների, գիտական լայն համայնքի և ընդհանուր առմամբ հասարակության հետ
7. Գիտական և մասնագիտական գործունեության համատեքստում կարող են նպաստել գիտելիքահենք հասարակության տեխնոլոգիական, հասարակական կամ մշակութային առաջընթացին

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՇ-Ի ՆԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ (8-րդ մակ.)

1. Գիտելիք աշխատանքի կամ ուսման ոլորտի առաջնագծում և փոխհատվող ոլորտներում
2. Ամենաառաջավոր և մասնագիտացված կարողություններ և մեթոդներ, ներառյալ սինթեզը և գնահատումը, որոնք անհրաժեշտ են լուծելու կարևորագույն խնդիրներ հետազոտական և/կամ նորարարական գործունեությունում, ինչպես նաև ընդլայնելու և վերասահմանելու առկա գիտելիքը կամ մասնագիտական պրակտիկան
3. Դրսևորում է զգալի կոմպետենտություն, նորարարություն, ինքնավարություն, գիտական և մասնագիտական բարեխղճություն և շարունակական հանձնառություն՝ աշխատանքի կամ ուսման բնագավառի առաջնագծում (ներառյալ հետազոտական աշխատանքը) նոր գաղափարների կամ գործընթացների զարգացման համար



## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ- 1

- Ի՞նչ գիտենք որակավորումների շրջանակ(ներ)ի վերաբերյալ: Ի՞նչ է այն և ի՞նչ նպատակով է կիրառվում
- Ինչպե՞ս և ի՞նչ չափանիշներով ենք տարբերակում բակալավրի, մագիստրոսի և գիտությունների թեկնածուի որակավորում ունեցող մասնագետներին
- Որո՞նք են այն գիտելիքը, կարողությունները և հմտությունները, որոնք անհրաժեշտ են վերոնշյալ յուրաքանչյուր կրթական մակարդակի համար
- Ինչպիսի՞ մասնագիտական հմտություններ են անհրաժեշտ գիտությունների թեկնածուին գիտակրթական ոլորտում և դրանից դուրս մասնագիտական առաջխաղացում ունենալու համար

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ- 2

- Գիտությունների թեկնածուի մակարդակում ի՞նչն է առավել կարևորվում. գիտական նորույթ պարունակող ատենախոսությունը, թե՞ գիտական գործունեություն ծավալելու ունակ ձևավորված մասնագետը
- Որո՞նք են գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի հիմնական տարբերությունները: Ի՞նչն է առավել հատկանշական դոկտորի գիտական աստիճանի համար, ինչպիսի կարողություններ և հմտություններ կնշեիք
- Գիտությունների դոկտորի որակավորումը պետք է արդյո՞ք ներառվի ՀՀ որակավորումների ազգային շրջանակում

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- թվարկել գիտությունների թեկնածուի և դոկտորի մակարդակների համար անհրաժեշտ գիտելիքը, կարողությունները և հմտությունները
- Ի՞նչ ընդհանուր գծերով կբնութագրեք այդ որակավորումները



## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ-1

### Գործիքային կոմպետենցիաներ

- վերլուծելու և սինթեզելու ունակություն
- կազմակերպելու և պլանավորելու ունակություն
- հիմնարար ընդհանուր գիտելիք
- մասնագիտության հիմնարար գիտելիք
- մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողություն
- օտար լեզվի իմացություն
- համակարգչային հմտություններ
- տեղեկատվության կառավարման հմտություններ (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն)
- բարդ խնդիրներ լուծելու ունակություն
- որոշումներ կայացնելու ունակություն

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ-2

### Միջանձնային կոմպետենցիաներ

- քննադատական և ինքնաքննադատական ունակություններ
- թիմային աշխատանք
- միջանձնային հարաբերություններ
- միջդիսցիպլինար թիմում աշխատելու ունակություն
- այլ ոլորտների մասնագետների հետ շփվելու ունակություն
- բազմաձևության և բազմամշակութայնության ընկալում
- միջազգային միջավայրում աշխատելու ունակություն
- բարոյական արժեքների դավանում

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ-3

### Համակարգային կոմպետենցիաներ

- գիտելիքը գործնականում կիրառելու կարողություն
- հետազոտական հմտություններ
- սովորելու ունակություն
- նոր իրադրություններին հարմարվելու ունակություն
- նոր գաղափարներ մտահղելու ունակություն (ստեղծագործականություն)
- առաջնորդություն
- այլ երկրների մշակույթների և սովորույթների իմացություն
- ինքնավար կերպով աշխատելու ունակություն
- նախագծերի մշակում և կառավարում
- նախաձեռնողականություն և ձեռներեցության ձիրք
- որակի վերաբերյալ հոգածություն
- հաջողության ձգտելու հանձնառություն

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Համեմատել խմբերի նկարագրություններն ըստ մակարդակների, համադրել ՈԱՇ-ի հետ և վերլուծել

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ